



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ո Ւ Կ

Մրտագին ուրախությամբ ենք արտապահ Թուրքիայի Հայոց Պատրիարքության Ս. Խաչ Դպրեվանքի պաշտոնարեր «Եղաղակար» ամսագրի 1958 թվականի փետրվարի համարից Ամենապատիլ Տ. Գրաւեզին արժեպիտիկապու Խաչառյանի խորհրդանությունները, մին գրված Վեհափառ Հայրապետի 1957 թվականի դեկտեմբերի 20-ի հսկ մյուսը՝ 1957 թվականի գեկանմբերի 17-ին Ս. Խաչ Դպրեվանքի աւանդուրյան ուղղված հայրապետական սրբատակ կոնդակների առիվ:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԲ Էջմիածին ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՄԵՏԵՍ

Սուրբ էջմիածինը անշեղ լուսաբնեն է Հավետ՝ մեր լուս-հայլատքին: Կհավատանք խորապես և անհրկյուն: Մեր սրտերու սրբաբանությունը, Կհավատանք, տեսիլքի մը ճշշմարտությամբ և հոգեաեսությամբ, թե հոն է իշեր Միաժինը հոգածությամբ մը «յատկական սիրոյ» և ոչ թե բռնական «զորությամբ», այլ ի՞ր «Հոգիով» և «Ուսկի Ուսով», հիմն է զրեր ամրակուու Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցին՝ իր Մայր Աթոռով և համայն հավատացյալ Հայոց ձայնով ու սրտով ընտրեած և օծված Հայրապետ-Կաթողիկոսով: Անսասան է այն, նախ գաղափարով և ապա բազմադարյան կառուցքով և անմերձենալի՝ ապիրատ ձեռքերու և անհասանելի՝ անծով ու մշշապատ միտքերու: «Բուռն Հակաէջմիածնական», — ողորմելի՝ դատողություն: «Բուռն էջմիածնապատպահան», — և ո՞ր ճշմարիտ Հավատացյալ պիտի լուսար: Ժամանակի իմաստություն, — ո՞ր ողջմտություն՝ աշխարհին «հիմարություն» նկատված՝ պիտի շունենար զայն:

Մեր բազմացեղ երկրագունդին ո՞ր մասին վրա և ո՞ր անկյունին մեջ ալ գտնվինք, կենսագործելով լիովին և Հավատարմորեն մեր քաղաքացիական և Հայքենակցական նվիրական պարտականությունները, — համարձակորեն և անվարան կպահենք մեր հոգու կապը Հավատքի այդ անշարժ լուսա-

րնեսին հետ. զի ան ունի իր հեռահաս լուսարձակը՝ ցուց տալու մեջ՝ Ավետարանի աշտարակն՝ «Ճանապարհ»-ը ճշմարտության և խաղաղության, եղբայրսիրության, աննախանձ գոյակցության և ներդաշնակ գործակցության, աղգերու միջև աննենդ սիրու և հաշտության:

Անթիվիասի քայլը անորակելի է: Իր սահմանագունդ համարձակությունն ու հանդրգնությունը՝ անհանգուրժելի են: Բոլոր բարենախանձ փորձերն ու թելազրությունները՝ սանձելու ինքնասպանության առաջնորդող ժպրհությունը, — զդրախոտաբար բախեցան ապառաժ սրտերու:

Եվ ահա՝ հուսաբեկ և դառնակսկիծ հոգվոհեծությամբ հոյաված հայրապետական կրնդակը՝ որ պիտի կարենար խարազանել ու խարանել ամենեն խեռ խիղճերն անգամ:

Միրելի՛ հայ հավատացյալներ, բարի քաղաքացիներ բոլոր երկիրներու, լսեցե՛ք հատկսկիծ ձայնը մեր Հայրապետին, քաղցրացուցե՛ք իր սրտի դառնությունը ձեր հավատքին անդրդիմությամբ: Հառած պահեցե՛ք ձեր հոգվու աշքերը կուսարենեսին՝ հզման սեղանի սուրբ տեսիլին: Ըրե՛ք որ անխառն մնա անուշությունն այդ ձայնին, օծությամբն այն Սրբալուս Մեռոնին՝ որով «աստուածային և երկնաւոր շնորհ» է թափված Անոր գագաթին վրա՝ հայրապետական ձյունապիտակ քողով շքավորված:

Եվ դուք, մեր այս պատվական Հայրենի-
քին թուրքիո հարազատ հայ քաղաքացի-
ներ, եղբայրակիցներ ձեր իսլամ հայրենա-
կիցներուն, շարունակեցնք սիրել՝ բաց ճա-
կատով ու սրտով, ձեր հոգիի սուրբ լուսա-
խորանը եղող Ս. էջմիածինը: Անպարան՝
կախ և բռարձարժ պահեցնք ձեր ներքին
աստվածակերտ տաճարներուն մեջ, լուսա-
վորի կանթեղը մշտավառ:

Ո՞ւր էր թե, հերձածողական փորձության
մեջ ինկողներն ալ, զղացած ու զգաստա-

ցած, իմաստովթյունն ու բարոյական արիու-
թյունն ունենային վերադառնալու և օտար-
երկրյա իրենց Ս. Գրիգոր Լուսավորիչ տա-
ճարին կանթեղն ալ վերստին բոցավառեկին,
այս կանթեղեն առնելով շշողն աստվածե-
ղեն» ավետարանաշտմն խոնարհությամբ
բարձրացնելու համար պատիվը՝ նաև Մայր
Աթոռի անբաժան մասը կազմող ու անոր
հոգմոր վերին իշխանությունն ու հեղինա-
կությունը իշխան ճանչող իրենց վտա-
րանդի և նժդի՛ Աթոռին: Գ. Պ.

ՍՈՒՐԵԲ ԽԱԶ ԴՐՈՒՅՎԱՆՔԻ ՍԱՆԵՐՈՒՄԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ԵՎ ԼԻՍԵԱԿԱՆՆԵՐՈՒՄԻՆ ՍԱՄՆԱՎՈՐԱՊԵՍ

Սիրելի՝ որդյակներս.

Սուրբ էջմիածնի 1655-ամյա Լուսախորա-
նեն, երգասաց և պարագուփս թունիկի մը
թոփշըն առած, սույն գեղահյուս կոնդակը՝
հայրական ողջոյն և հայրապետական օրհ-
ոնություն կհասցնե ձեզին Ս. Խաչ Դպրեվանքի
սաներու և մեր հոգեհատոր զավակներուն:
Վստա՞ իմ, թե ան քաղցրութեն պիտի խոսի
ձեր սիրուերուն, բերելով ձեզի լոյսը մեր
կենդանի հավատքին՝ իր բոցն առած մշտա-
վառ կանթեղեն: Ս. Լուսավորշին:

Դուք գիտեք և կսիրեք՝ անկշռելի արժեքն
այդ լուսին, բացած ըլլալով ձեր սիրուն ու
միտքը աստվածային սիրո և գիտովթյան
կենսատու շողերուն, ոի ձեր Տունն իսկ՝ Ս.
Խաչով կնքված ու հովանավորված Դպրե-
վանքը, Հիմնարկված է՝ ըլլալու, և հՀա-
վատանք թե է, մաքուր ու կրօնաշումն ըն-
դունարանը աստվածային այդ անփոխարի-
նելի պարզեներուն... Դուք քաղցն ու ծարա-
վլ ունիք այդ լուսին, որուն քաղցրությունը
կճաշակեք՝ հետզետե ավելի ախորժութ, և
զոր կշամքեն ձեզի ձոգենոր առաջնորդ-
ներն ու գաստիարակ-ուստիշները:

Ունիք, դուք ալ, մշտավառ կանթեղը մեր
Ս. Լուսավորիչ Հոր, ձեր Ս. Խաչ տաճարին
խորանեն ոսկեշղթայով կախ և ձեր հոգի-
ներուն մեջ՝ անպարան բոցարձարժ:

Կպատրաստվիք ըլլալու ախոյան հավատ-
քի և ռահմիրա գիտովթյան՝ Աստուծո փառ-
քին և մեր ժողովուրդին հոգեոր շինության
և մտավոր մշակության համար: Ա՛յս է մեր
երազը, այս է մեր ակնկալությունը: Ա՛յս
կապան ձեն հանուր Հայոց Հայր և Ս. Լու-
սավորիչ արքանավոր հաջորդ՝ շնորհազարդ
Տ. Տ. Կազենի Ա. Վեհափառ Կաթողիկոսը՝ Ս.
էջմիածնի աստվածակառուց Մայր Աթոռին,
Ա՛յս կապահանջն նաև մեր այս հայրենիքը՝
իր լուսասիր առաջնորդներով:

Ավելի լայն բացեք թոփշները ձեր հո-
գին, թևախառնվելու օրհնաբեր թունիկի
հետ՝ սիրահար մարզի, դուք ևս սլացք առած
Ս. Եկեղեցվո արոտներուն մեջ և ներշնչված
անոր անուշ երգն և մաքուր ոգիեն:

...Բացե՛ք, կըսեմ, ձեր հոգիները՝ ըմբռո-
նելու համար այս ճշմարտությունները աս-
տիճանաբար, որչափ կհառաջանաք ձեր աս-
պարեզին մեջ: Եղե՛ք մանավանդ շնորհալի՝
խմելով անսպառ Լուսավորչին շնորհա-
բաշխ:

Հայրապետական սույն օրհնաբեր կոնդա-
կը՝ ոսկեղար մանյակը թող ըլլա ձեր պարա-
նոցին, և հուշարձակ ու նշանատախտակ՝
քալելու անվհատ ու անսայթաք ձեր առջե-
գծված սրբազն շավիղեն:

...Արևամուտին եմ մոտ: Բայց, իթ Աստ-
ված, աննախանձ տվիշը կյանքին, իմ, ձեր,
մեր սիրելի ժողովուրդին և մեր հոգեոր եղ-
բայրներուն և պաշտոնակիցներուն, և մա-
նավանդ մեր պատվական Հայրապետին սըր-
տաբուփս աղոթքներով, պարզմե ինձ քանի մը
տարիներ ևս,— լի եմ տեսնչանքով տեսնելու
ակնկալված երախայրիքը բոլոր աշխատու-
թյանց, և օրհնելու զեեզ հայրական զերմ
սիրո օծումով և փակելու՝ պսակված հույսի
լույսով ողողված իմ աշքերը խաղաղությամբ
և անվրուփ:

Իսկ եթե այդ չէ իր օրհնյալ կամքը՝ ասի-
կա նկատեցե՛ք ու պահեցե՛ք որպես իմ
հուակ-բանքը ձեր հոգեոր պսակադրության
հանդիսավոր պահում:

Միշտ աղորող ձեզի համար,
Ձեր հոգելոր հայրը՝

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատրիարք Հայոց Թուրքիո
և Վանահայր Ս. Խաչ Դպրեվանուց
18 Փետրվար 1958
Տոն Մերա Վարդանաց